19.qxd 27/09/2026 19:55 Page 1

Գեղամա աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 25 սեպտեմբերի 2026թ. թիվ 19(647)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԵՑ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՑ

Սեպտեմբերի 10-ին Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակից տրվեց «UCI Europe Tour»-ի միջազգային հեծանվավազքի «Tour of Armenia» մրցաշարի մեկնարկը:

Հեծանվավազքի միջազգային մրցաշարի բացման արարողությանը մասնակցեցին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանների աշխատակազմերի ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ:

Մինչ մրցաշարի մեկնարկը կազմակերպիչներն անուն առ անուն ներկայացրին մասնակից 16 թիմերի 96 ներկայացուցիչներին, ովքեր սեպտեմբերի 11-13-ի ընթացքում հեծանիվներով կհաղթահարեն շուրջ 500 կիլոմետր ճանապարհ:

Մրցաշարի կարեւորության ու միջազգային նշանակության մասին տպավորություններով կիսվեց ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

-Սա պատմական օր է Հայաստանի համար, քանի որ կարողացանք կյանքի կոչել այս մեծ նախագիծը, որի իրականացմանը նախապատրաստվել ենք երկու տարի, եւ այսօր մենք հյուրընկալում ենք միջազգային հեծանվավազքի հեղինակավոր մրցաշար, որին մասնակցում են աշխարհի տարբեր երկրների 16 թիմեր, այդ թվում՝ նաեւ Հայաստանի թիմը: Հեծանվորդները 4 օր տեւողությամբ Հայաստանում պետք է անցնեն 500 կիլոմետր ճանապարհ: Սա խոսում է այն մասին, որ Հայաստանի ճանապարհների վիճակն այնքան բարվոք է, որ կարողանում ենք միջազգային մրցաշար ընդունել: Եվ մենք սրանով շատ կարեւոր քայլ ենք անում հեծանվային սպորտի զարգացման գործում, որի արդյունքները կտեսնենք ամեն տարի: Մրցաշարի մեկնարկին ու ընթացքին հետեւելու են աշխարհի բոլոր երկրները, քանի որ միջազգային այն հարթակները, որոնց հետ մենք պայմանավորվել ենք մրցաշարի լուսաբանման ուղղությամբ, հեռարձակվում են բոլոր մայրցամաքներում: Սրանով մենք տեսանելի ենք դարձնում ոչ միայն հեծանվային սպորտի զարգացման մեր հնարավորությունները, այլ նաեւ աշխարհով մեկ հանրահռչակում ենք մեր երկրը, մեր պատմամշակութային ժառանգությունը, համայնքները, բնապատկերները, մարդկանց: Սա ռազմավարական կարեւոր քայլ է, ու ես հուսով եմ, որ չորս օր անց, մրցաշարի ամփոփումից հետո, մենք կունենանք գոհացուցիչ արդյունքներ ու բավարար փորձ ու գիտելիքներ՝ այն ամենամյա դարձնելու համար: Մրցաշարի հանդեպ կար մեծ հետաքրքրություն Ճապոնիայից, Ղազախստանից, Եվրոպական մի շարք երկրներից: Կարեւոր է եւ այն , որ մենք ամբողջ նախագիծն իրականացրել ենք միջազգային հեղինակավոր խորհրդատվական ընկերության հետ միասին, եւ նրանց ուղեկցությունն առանցքային է: Այսօր էլ տեսաք, որ միջազգային այս մրցաշարը սպասարկող մեծ անձնակազմ կա, որը հավաստագրված է՝ նման հեղինակավոր մրցաշար սպասարկելու համար: Կարելի է վստահ լինել, որ այս մրցաշարի մեկնարկով ու ընթացքով մեր երկիրը եւս մեկ հաջողություն գրանցեց իր սպորտային պատմության մեջ: Այս մրցաշարի անցկացման արդյունքում Գեղարքունիքի մարզի մեծ մասն էլ է հայտնվում միջազգային տեսանելիության ներքո, Սեւանա լճի համար էլ միջազգային հանրահռչակման հերթական հնարավորությունն է ստեղծվում,- ներկայացրեց նախարարը:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առթիվ:

Սեպտեմբերի 21-ը մեր ժողովրդի կամքի, արժանապատվության եւ սեփական պետությունը կերտելու վճռականության խորհրդանիշն է: Անկախությունը մեզ տրված ժառանգություն չէ միայն? այն արժեք է, որը մենք պարտավոր ենք ամեն օր ամրապնդել՝ մեր աշխատանքով, միասնականությամբ եւ պատասխանատվությամբ:

Այս օրը նաեւ առիթ է վերարժեւորելու մեր անցած ճանապարհը եւ նոր ուժով նայելու դեպի ապագա: Մեր պետության ուժը մեր ժողովրդի հավատն է սեփական երկրի նկատմամբ, հայրենիքում ապրելու, արարելու եւ արժանապատիվ ապագա կերտելու կամքը:

Թող մեր համատեղ ջանքերով Հայաստանը դառնա առավել ամուր, անվտանգ, զարգացած եւ բարեկեցիկ պետություն, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի իր ապագան կերտելու վստահությունն ու հնարավորությունն ունի:

Թող անկախ Հայաստանի դրոշը միշտ ծածանվի խաղաղ երկնքի ներքո, իսկ մեր սերունդներին փոխանցենք ավելի ուժեղ, զարգացած, միասնական եւ արժանապատիվ Հայաստան:

Փա՛ռք նահատակներին եւ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՌԱԳՈՒՅՆ ԴՐՈՇՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի օրվա միջոցառումների շրջանակներում Գեղարքունիքի մարզի Մարտունի եւ Վարդենիս քաղաքների կենտրոնական հրապարակներում նորակառույց պատվանդանների վրա բարձրացվել են Հայաստանի Հանրապետության մեծ Եռագույն դրոշները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, սեպտեմբերի 21-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը եւ Վարդենիս համայնքի ղեկավար Սիարոն Խաչատրյանը Վարդենիս քաղաքի կենտրոնական հրապարակում՝ նոր, բարձր պատվանդանի վրա, հանդիսավորությամբ բարձրացրել են Հայաստանի Հանրապետության մեծ Եռագույն դրոշը:

Օրհնանքի խոսքով հանդես է եկել Հայ Առաքելական եկեղեցու Վարդենիսի եւ տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Հարություն քահանա Հունանյանը:

Միջոցառմանը ներկա են եղել ուժային կառույցների ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, ՀՈԱԿ-ների եւ ՊՈԱԿ-ների աշխատակիցներ, համայնքի բնակիչներ եւ հյուրեր:

Հանդիսավոր արարողության ընթացքում կենդանի կատարմամբ հնչել է Հայաստանի Հանրապետության օրհներգը, որին հաջորդել է տոնական մշակութային ծրագիրը:

Անկախության 35-րդ տարեդարձին Մարտունիում եւս բարձրացվել է մեծ Եռագույնը՝ որպես մեր անկախ պետականության, միասնականության եւ պատասխանատվության խորհրդանիշ:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը մասնակցել է տոնական միջոցառմանը՝ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ նորակառույց պատվանդանի վրա վեր բարձրացնելով Հայատանի Հանրապետության մեծ Եռագույն դրոշը: Միջոցառմանը մասնակվել են ուժային կառույցների կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ: Միջոցառումն ուղեկցվել է տոնական համերգով:

Վարդենիս եւ Մարտունի քաղաքներում տեղադրված Եռագույն նոր դրոշների պատվանդանները կառուցվել են Վարդենիսի եւ մարտունու համայնքապետարանների ֆինանսավորմամբ: Յուրաքանչյուր համայնքապետարան ծրագիրը ֆինանսավորել է 16 միլիոն 230 հազար դրամի չափով:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՇԱՏՋՐԵՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԸ

2026 թվականի սեպտեմբերի 26-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատջրեք գյուղում հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ նորակառույց դպրոցի բացման արարողությունը, որին մասնակցեցին ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Սիարոն Խաչատրյանը, Շատջրեքի վարչական ղեկավար Ջոյա Գեւորգյանը, դպրոցի մանկավարժներն ու աշակետները, բնակիչները, հրավիրված հյուրեր Երեւանից ու Հայաստանի այլ մարզերից:

Ծրագրի իրականացման համար Կառավարությունը հատկացրել է ավելի քան 820 միլիոն դրամ: Արդյունքում՝ կառուցվել է 144 տեղ հզորությամբ տիպային (մոդուլային) դպրոցի նոր շենք: Քանդվել է դպրոցի հին շենքը, բարեկարգվել բակը, տեղադրվել է 67 կվտ հզորությամբ ֆոտովոլտային կայան:

Շատջրեի միջնակարգ դպրոց կհաճախեն նաեւ Գեղամաբակ ու Ջաղացաձոր բնակավայրերի աշակերտները:

Ինչպես տեղեկացրին ՀՀ վարչապետի աշխատակազմից, Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել ելույթով եւ շնորհավորել ներկաներին դպրոցի շահագործման հանձնելու առիթով: ,Շատ կարեւոր է ունենալ դպրոց, որը ներշնչում է աշակերտներին սովորել, եւ այո՛, մենք հիմա ունենք այդպիսի դպրոց, որտեղ երեխաները կարող են սովորել, ստեղծագործել, զբաղվել սպորտով, մրցակցել եւ որտեղ ուղղակի կարող են ապրել: Մեր ընկալումն այն է, որ դասերից հետո երեխաները չպետք է պարզապես տուն գնան, այլ պետք է ժամանակ անցկացնեն դպրոցում,- ասել է երկրի ղեկավարը:

Վարչապետը հավելել է՝ այս ենթակառուցվածքը նաեւ բնակավայրի համար է շատ կարեւոր, քանի որ մշակվում են տարբեր ծրագրեր, որպեսզի մեծահասակները նույնպես այս տարածքներն օգտագործեն իրենց կյանքի որակը բարելավելու, սոցիալական շփման նոր ձեւեր եւ նոր բովանդակություն ստանալու համար:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

19.qxd 27/09/2026 19:55 Page 2

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵԼ Է ՏԱՐԱԲՆՈՒԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում Հայաստանի Հանրապետության Անկախության 35-րդ տարեդարձը նշանավորվել է տարաբնույթ միջոցառումներով:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, սեպտեմբերի 21-ին Սեւան համայնքի պետական եւ համայնքային հիմնարկ-ձեռնարկությունների, ուսումնական եւ կրթական հաստատությունների սաներն ու աշխատակիցները, համայնքապետարանի աշխատակազմը, վարչական ղեկավարներն ու ավագանու անդամները՝ Սեւան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Մարգարյանի եւ Սեւան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանի գլխավորությամբ, այցելել են Սեւանի քաղաքային պանթեոն, որտեղ հարգանքի տուրք է մատուցվել Հայաստանի Հանրապետության Անկախության եւ հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերած մեր հերոսների հիշատակին: Կատարվեց պսակադրում եւ ծաղկեդրում:

Սեւան համայնքի հոգեւոր հայրերի կողմից կատարվել է նաեւ անկախության համար իրենց կյանքը զոհաբերած հերոսների հիշատակի օրհնության կարգ:

Սեւանի քաղաքային պանթեոնում տեղի է ունեցել նաեւ Սեւանի երկրապահ կամավորական ջոկատի հրամանատար Սամվել Գեւորգյանի հուշաքարի բացման արարողությունը: Արարողությանը ներկա են եղել նրա հարազատները, զինակից ընկերներն ու համայնքի ներկայացուցիչները:

Հարգանքի ու հիշատակի արարողություն է տեղի ունեցել նաեւ Սեւանի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի հարակից տարածքում, ուր տեղադրված է 2020 թվականի 44-օրյա պատերազմի եւ հայրենիքի պաշտպանության համար զոհված հերոսների հուշաքարը:

Ծաղկեդրման արարողություններ են անցկացվել նաեւ Սեւան համայնքի բնակավայրերում գտնվող հուշաքարերի եւ հուշակոթողների մոտ:

Հայաստանի Անկախության 35-րդ տարեդարձը Սեւան համայնքում նշվել է մշակութային բազմաբովանդակ միջոցառումներով՝ միավորելով գրականությունը, արվեստը, երաժշտությունն ու պարը:

«Անկախության սերունդը» խորագրով ցերեկույթ է տեղի ունեցել «Սեւան համայնքի ԳԿՀ» ՀՈՒԱԿ-ի կենտրոնական գրադարանում: Միջոցառումն ուղեկցվել է թեմատիկ ցուցադրությամբ՝ անդրադառնալով անկախության գաղափարին, դրա արժեքին ու նոր սերնդի մեջ դրա պահպանմանը:

«Սեւան համայնքի Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց» ՀՈՒԱԿ-ի «Քո անունն է Հայաստան» խորագրով ցուցահանդեսն անցկացվել է Սեւանի մշակութային կենտրոնում: Պատանի ստեղծագործողների աշխատանքներում Հայաստանն ու հայրենիքի հանդեպ սերը ներկայացվել են գույների, կերպարների ու արվեստի լեզվով:

Իսկ Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի դահլիճում տոնական տրամադրությունը շարունակվել է ,Անկախության 35-ամյա ճանապարհըե խորագրով համերգային ծրագրով:

Բեմում հանդես են եկել Սեւան համայնքի պարային խմբերը եւ Սեւանի Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի սաները՝ իրենց կատարումներով ու պարային համարներով ներկայացնելով հայկական մշակույթի ողջ հմայքն ու կենսունակությունը:

Միջոցառման ընթացքում ՀՀ Անկախության 35-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին ակտիվ մասնակցության համար միջոցառման մասնակիցները արժանացել են շնորհակալագրերի:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԳԱՍՏՐՈՓԱՌԱՏՈՆ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում «Սարվոր» զբոսաշրջային, սոցիալ-կրթական, բնապահպանական ՀԿ-ի կողմից, Գավառի համայնքապետարանի աշխատակազմի հետ համագործակցությամբ, կազմակերպվել եւ անցկացվել է Գաստրոփառատոն, որը հյուրընկալել է նաեւ մայրաքաղաքից ու Հայաստանի տարբեր մարզերից ժամանած բազմաթիվ հյուրերի:

Գաստորփառատոնը կրել է «Գավառի համն ու հոտը» խորագիրը:

Փառատոնին մասնակցել են Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմերի, կրթամշակութային հաստատությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, սննդամթերքի արտադրությամբ զբաղվողներ:

Փառատոնն ուղեկցվել է տաղավարներում ներկայացված ու Գավառին բնորոշ ուտեստների ցուցահանդես-վաճառքով, ավանդական ուտեստների՝ Գավառի քյուֆթայի, փախլավայի, արիշտայի, այլ սննդամթերքների պատրաստման վարպետաց դասերով, ավանդական խաղերով,ազգային պարերի վարպետաց դասերով, Գավառ համայնքի արվեստի եւ երաժշտական դպրոցների սաների ելույթներով ու հյուրասիրությամբ:

«Սարվոր» զբոսաշրջային, սոցիալ-կրթական, բնապահպանական ՀԿ նախագահ Լալա Մկրտչյանի հավաստմամբ՝ Գաստրոփառտոնըե Գավառում կդառնա ավանդական՝ նպաստելով զբոսաշրջության եւ տեղական մթերքների արտադրության իրացմանն ու զարգացմանը:

Ալվարդ Մանուկյան

«ՀՀ ՎԱՐԶԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԻ ՄԵՐ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Սեպտեմբերի 12-ին Սեւանի թերակղզի–Շողակաթ 40 կմ ճանապարհահատվածում կայացած «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների սիրողական խճուղային հեծանվավազքի եզրափակիչ փուլում Գեղարքունիքի մարզի երկու դպրոցի հաջողվել է մրցանակային տեղեր նվաճել տարիքային երկու խմբերում:

Սիրողական հեծանվավազքի եզրափակիչ փուլին մասնակցել են Հայաստանի 10 մարզերի եւ Երեւանի 22 թիմեր:

10-12-րդ դասարանների մրցապայքարում Գեղարքունիքի մարզից մրցանակային 2-րդ տեղը զբաղեցրել է Լճաշենի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը՝ իրենից առաջ թողնելով միայն Կոտայքի մարզի Կապուտանի միջնակարգ դպրոցի թիմին:

7-9-րդ դասարանների մրցապայքարում 3-րդ տեղը զբաղեցրել է Սեւանի Մ. Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոցի թիմը՝ զիջելով միայն Կոտայքի մարզի Ակունքի միջնակարգ եւ Արարատի մարզի Մասիսի թիվ 4 հիմնական դպրոցների թիմերին:

Առաջին տարիքային խմբի հաղթող թիմերի պարգեւները հանձնել է հեծանվավազքի օլիմպիական չեմպիոն, իսպանացի Սամուել Սանչեսը, կրտսեր տարիքային խմբի հաղթողների մրցանակները՝ RCS Sports & Events ընկերության գլխավոր գործառնական տնօրեն եւ հեծանվային սպորտի տնօրեն Լուկա Գուերչիլենան:

Երկու տարիքային խմբերում մրցանակային առաջին երեք տեղերը զբաղեցրած դպրոցների թիմերը, աշակերտներն ու ֆիզկուլտուրայի ուսուցիչները պարգեւատրվել են գավաթներով, մեդալներով, հավաստագրերով եւ դրամական մրցանակներով:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ 672 ԴԻՄՈՐԴ

Գեղարքունիքի մարզից 2026 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվել 672 դիմորդ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, 2026 թվականին ՀՀ բուհերի ընդունելության հայտագրման փուլերում Գեղարքունիքի մարզից «Գնահատման եւ թեստավորման կենտրոնի» dimord.am կայքում դիմում-հայտ է լրացրել 995 դիմորդ: ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի հիմնական փուլին միասնական եւ ներբուհական քննություններին մասնակցելու հայտ է ներկայացրել դիմում-հայտ լրացրածներից 962-ը, որոնցից 6-ը՝ ռազմական ուղղվածության բուհերի համար: Առանց բուհ եւ մասնագիտություն նշելու միասնական քննություններ է հայտագրել 33 դիմորդ:

Մրցույթի հիմնական փուլում ընդունվել են մասնագիտություն հայտագրած դիմորդներից 583-ը, որը կազմում է հայտագրվածների ընդհանուր թվի 61 տոկոսը:

Դրական միավորներով մրցույթից դուրս մնացած 103 դիմորդ հայտագրվել է մրցույթի լրացուցիչ փուլում, որոնցից 89-ին հաջողվել է ընդունվել բուհեր: Մրցույթի հիմնական եւ լրացուցիչ փուլերի հանրագումարում Գեղարքունիքի մարզից բուհեր են ընդունվել 672 դիմորդ, որը կազմում է մասնագիտություն հայտագրածների ընդհանուր թվի 70,3 տոկոսը:

Համեմատության համար նշենք, որ 2025 թվականին Գեղարքունիքի մարզից բուհեր են ընդունվել 586 դիմորդ:

Առավել շատ թվով դիմորդներ կուսանեն Երեւանի պետական, ագրարային, մանկավարժական, տնտեսագիտական ճարտարագիտական, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարաններում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԵՑ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՑ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Մրցաշարը միջազգային չափանիշներին համապատասխան եւ անվտանգ անցկացնելու նպատակով նշված օրերին հանրապետության մի շարք ավտոճանապարհներին եւ փողոցներում երթեւեկությունը ժամանակավորապես կսահմանափակվի:

Հեծանվազքի մեկնարկը տրվեց Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակից՝ Զորավար Անդրանիկի փողոցով դեպի Ազատության փողոց, ապա՝ Սեւան-Մարտունի-Գետափ Մ-10 ավտոճանապարհ, Երեւան-Սեւան-Իջեւան Մ-4 ավտոճանապարհ, այնուհետեւ՝ Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս Հ-7 ավտոճանապարհով դեպի Մեծ Մասրիկ բնակավայր, որտեղ ավարտվում է երթուղու տվյալ փուլը:

Սեպտեմբերի 11-ին մրցաշարը մեկնարկեց Տավուշի մարզի Կիրանց բնակավայրից եւ ավարտվեց Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում:

Սեպտեմբերի 12-ին մրցաշարը մեկնարկեց Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի մշակույթի տան դիմացից: Երթուղին անցավ Մյասնիկյան փողոցով դեպի Երեւանյան փողոց, ապա Կամոյի փողոց՝ Սեւան-Մարտունի-Գետափ Մ-10 ավտոճանապարհ, այնուհետեւ դեպի Երեւան-Սեւան-Իջեւան Մ-4 ավտոճանապարհ: Մ-4 ավտոճանապարհով երթուղին շարունակվեց դեպի Կոտայքի մարզի Հրազդան քաղաք, ապա Գեղարքունիքի մարզի Զովաբեր բնակավայր: Զովաբերից մասնակիցները Սեւան-Ծաղկունք-Զովաբեր ավտոճանապարհով շարժվեցին դեպի Սեւան համայնքի Գոմաձոր եւ Ցամաքաբերդ բնակավայրեր, այնուհետեւ կրկին դուրս եկան Երեւան-Սեւան-Իջեւան Մ-4 ավտոճանապարհ, շարժվեցին դեպի Ծովագյուղ, ապա Սեմյոնովկա բնակավայր եւ այնտեղից մուտք գործեցին Տավուշի մարզի վարչական տարածք: Սեպտեմբերի 13-ին մրցաշարը շարունակվեց մայրաքաղաք Երեւանում 110 կմ երկարությամբ ու 10 շրջապտույտով:

Մրցաշարի հաղթողների պարգեւատրման արարողությունը կայացավ Երեւանում: Պարգեւները հանձնեցին ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

19.qxd 27/09/2026 19:55 Page 3

ՀԱՆԴԻՊԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՇԱՏՋՐԵՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՅԱ ԴՊՐՈՑԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Անդրադառնալով PISA հետազոտության արդյունքներին, որոնց համաձայն Հայաստանի աշակերտները վատ ցուցանիշներ են արձանագրել, վարչապետը նշել է. «Այդ հետազոտությունը Հայաստանի Հանրապետությունում տասնամյակներով դպրոցի բացակայության մասին է: Եվ այո՛, մենք հիմա պետք է, ըստ էության, ստեղծենք Հայաստանի Հանրապետության դպրոցը, Չորրորդ Հանրապետության դպրոցը»:

Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ ՀՀ Կառավարությունն անում է հնարավորը երկրում կրթություն ստանալու լավ պայմաններ եւ հնարավորություններ ստեղծելու համար: Վարչապետը որակյալ կրթություն ապահովելու կարեւոր պայմաններից է համարել ուսուցիչների կամավոր ատեստավորման ծրագիրը եւ նշել, որ այն լինելու է շարունակական:

Ամփոփելով խոսքը՝ վարչապետը նշել է. «Դպրոցը կյանքով պետք է լիքը լինի, որովհետեւ ի վերջո այն կյանքը, որը մենք ուզում ենք, նախ պետք է դպրոցում կառուցենք: Դպրոցում կառուցած կյանքն է հետո արտահայտվում դրսում, այն կյանքը, որ մենք հիմա ունենք, արտահայտությունն է նրա, ինչպիսի կյանք ենք մենք կառուցել դպրոցներում, դասասենյակներում, ֆիզկուլտուրայի դահլիճներում, հանդիսությունների կամ դպրոցական բեմերում եւ այլն:

Սովորելու անբաժանելի մաս է ստեղծագործելը: Հնարավոր չէ սովորել առանց ստեղծագործելու: Ստեղծագործությունը, ստեղծարար միտքն առաջնային է, եւ իմ կարծիքով՝ նույնը վերաբերում է նաեւ

ուսուցչին: Ուսուցիչն էլ պետք է ստեղծագործի եւ ստեղծագործելով սովորի, եւ մեր բոլոր որոշումներն ու քաղաքականությունները ուղղված են դրան՝ խթանել, խրախուսել ստեղծագործող ուսուցչին: Ուսուցիչը պետք է իմանա, որ իր ստեղծագործական եւ արդյունավետ աշխատանքը գնահատվում է պետության, Հայաստանի Հանրապետության կողմից:

Վաղը Հայաստանի Հանրապետության անկախության 35-րդ տարեդարձն է, ուզում եմ առիթից օգտվել եւ բոլորիդ անձամբ շնորհավորել մեզ համար այդ կարեւոր տոնի առիթով: Անկախությունն այնպիսին է, ինչպիսին մենք այն կերտում ենք: Եվ հետեւաբար, մեր խնդիրն է ամեն տարվա հետ մեր անկախությունը, մեր պետությունը, մեր համայնքը, մարզը, միջավայրը, դպրոցը դարձնել ավելի լավը, ավելի մրցունակ, ավելի գրավիչ: Եվ այդ գրավչությունը եւ մրցունակությունը պետք է մեծ ուժ տա մեր երեխաներին, որպեսզի նրանք լավ սովորեն, որպեսզի նրանք լավ ապրեն»:

Հաջորդիվ Նիկոլ Փաշինյանը Շատջրեք բնակավայրում այցելել է նաեւ «Փռի» փառատոն: Այն կազմակերպել են «Կենարար» հիմնադրամը եւ Վարդենիս համայնքի գյուղաբնակ երեխաները՝ մարզային եւ համայնքային իշխանությունների աջակցությամբ: Փառատոնը կազմակերպվել է հիմնադրամի «Առաջնորդների դպրոց» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է բացահայտել եւ զարգացնել պատանիների առաջնորդական հմտությունները:

Վարդենիսի տարբեր դպրոցների մարզիկների մասնակցությամբ «Սպորտլանդիա» մարաթոնը տվեց տոնի առաջին ազդակը: Երեխաների փոխանցած ջահով Վարդենիս խոշորացված համայնքի ղեկավար Սիարոն Խաչատրյանը վառեց փուռը՝ խորհրդանշական կրակով պաշտոնապես ազդարարելով փառատոնի մեկնարկը:

Այդ օրը մեկտեղվել էին գյուղական բնակավայրերի երեխաները՝ ներկայացնելու իրենց պատմությունը, մշակույթն ու ավանդույթները, ճանաչելու միմյանց եւ միասին ստեղծելու տոնական տրամադրություն:

«Գեղամա աշխարհ»

ՀԵՐՈՍ ՊԱՊԻ ԾՈՌԸ

2022 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ Իշխանասարի դիրքերից մեկում նահատակվեց ժամկետային զինծառայող Արամ Էդիկի Մնացականյանը: Պատմում են՝ այս դիրքում տղաները թշնամուն դիմակայել են ողջ գիշերը՝ պատճառելով մեծ կորուստներ: Սակայն, անընդհատ հրետակոծելով ու գնդակոծելով քաջաբար դիմակայող տղերքի դիրքը, լուսադեմին թշնամուն հաջողվել է կոտրել հայոց քաջերի դիմադրությունը եւ վիրավոր մնացածներին գնդակահարել: Համացանցում պտտվող տեսանյութերից մեկն այս դիրքի մասին է: Ծանր վիրավոր վիճակում գնդակահարվել է նաեւ Արամը, ով չի ենթարկվել հրամանատարի հրամանին՝ նահանջել, մնացել է նրա հետ եւ նահատակվել են միասին:

Դպրոցական էի, որ պատահմամբ մի գրքույկ տեսա՝ գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Միխայիլ Նաումովի հրամանատարությամբ գործած պարտիզանական միավորման մասին, որը 1942 թվականից գործել է Ուկրաինայում, անցել 10 հազար կմ, մղել 336 մարտ՝ մեծ կորուստներ պատճառելով ֆաշիստներին: Նույն միավորման կազմում է գործել Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը: Պարզվեց՝ հայ պարտիզանների շարքում է եղել հորս քեռին՝ Մարտունու շրջանի Վաղաշեն գյուղի բնակիչ Խաչիկ Սարգսի Մնացականյանը: Գրքում մի քանի անգամ հիշատակվում է Խաչիկի մասին, ով աչքի է ընկել իր քաջագործությամբ: Ընթերցում ենք. «Առաջին վաշտի դասակներից մեկի վրա թշնամին գնդացրային կրակ բացեց եւ փակեց նրա նահանջի ճանապարհը: Մարտիկ Խաչիկ Մնացականյանը շրջանցեց կրակակետը եւ նռնակով լռեցրեց այն՝ ապահովելով դասակի համեմատաբար անվտանգ նահանջը»: Մեկ այլ էջում գրված է. «Հակառակորդը խուճապահար նահանջեց՝ կռվի դաշտում թողնելով 50 սպանված... Մարտիկ Խաչիկ Սարգսի Մնացականյանն այդ կռվում ոչնչացրեց յոթ հիտլերական...»:

Պատերազմի ավարտից հետո Խաչիկը տուն եկավ: Ուներ 5 որդի:

Նրա Գառնիկ որդու թոռը՝ Արամը, էդիկ եւ Նաիրա ամուսինների 2 որդիներից կրտսերն էր: Ծնվել է 2002թվականի օգոստոսի 1-ին, Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Տանը եւ դպրոցում լավ դաստիարակություն էր ստացել եւ դեռ մանկուց աչքի էր ընկնում հայրենասիրությամբ, զբաղվում էր սպորտով՝ բազկամարտով: Եկավ ժամանակը, եւ հետեւեց ավագ եղբայր Ռոմանին, հորեղբայրների որդիներին եւ սիրով դարձավ հայրենիքի զինվոր:

Հայրենասեր պատանու համար սիրելի կերպար էր մնացել հոր պապը՝ Խաչիկը, ով իր սխրանքներով ոգեւորել էր նաեւ 5 որդիներին, նրանց որդիներին ու թոռներին: 2021 թվականի փետրվարի 9-ին Արամը դարձավ զինվոր: Ծառայում էր Գորիսի զորամասերից մեկում: Հարազատներն ասում են՝ երբեք չէր տրտնջում ծառայությունից... Կենսուրախ ու բարի բնավորությամբ երիտասարդը նույն բնավորությամբ ծառայում էր բանակում՝ պատրաստ պաշտպանելու հայոց սահմանը: Ցանկացած հարցով օգնում ու աջակցում էր ընկերներին: Բարեկամները, ծանոթները, դպրոցական ու մարտական ընկերները մեծ սիրով են խոսում միշտ ժպտերոս, կենսախինդ հումորով Արամի մասին, ով աչքի էր ընկնում իր ուժով ու կամային բնավորությամբ: Վերջին անգամ ծնողների հետ հեռախոսով խոսել է դիրքեր բարձրանալուց առաջ՝ ասելով՝ լավ է, ամեն ինչ կարգին է: Թշնամու կողմից սանձազերծած հերթական ռազմական գործողություններն 2022 թվականի սեպտեմբերի 12-13-ին մեզանից շատ թանկ կյանքեր խլեցին: Մարտիրոսվեցին ու նահատակվեցին քաջորդիներ, ովքեր իրենց կյանքի գնով կանգնեցրին թշնամուն: Արամի՝ հերոսին վայել հուղարկավորությունը տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին հայրենի Վաղաշեն գյուղի գերեզմանատանը: Ներկա էին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, զինվորականներ, հոգեւորականներ: Բազում երազանքներով պատանին դարձավ Հավերժի ճամփորդ՝ համալրելով Արցախյան առաջին գոյամարտի եւ հետագա տարիներին մարտիրոսված հազարավոր քաջորդիների լուսեղեն բանակը:

Զոհրաբ Ըռքոյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ Է 8 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ

Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի եւ Վարդենիս համայնքներում 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել է 8 քաղաքական ուժ, որոնցից չորսը՝ Մարտունիում, երեքը՝ Գավառում եւ մեկը՝ Վարդենիսում:

Ինչպես տեղեկացավ ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայքէջից, Գավառ համայնքում ՏԻՄ ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել են «Համերաշխություն» դաշինքը, «Ինքնիշխան Հայաստան» եւ «Հայկական քվե» կուսակցությունները: Գավառ համայնքի գործող ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը գլխավորում է «Համերաշխություն» դաշինքի 66 հոգանոց ցուցակը:

Մարտունի համայնքում առաջադրվել են «Քաղաքացիական պայմանագիր», «Ապրելու երկիր», «Հայ հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունները եւ «Մեր համայնք» կուսակցության դաշինքը: Գործող համայնքապետ Հովհաննես Հովեյանը գլխավորում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 81 հոգանոց ցուցակը:

Վարդենիս համայնքում առաջադրվել է 1 քաղաքական ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Գործող համայնքապետ Սիարոն Խաչատրյանը գլխավորում է 53 հոգանոց ցուցակը:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԳՅՈՒՂԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԸ

Արդեն երկրորդ ամիսն է, ինչ ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել ու ընթանում են Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղի 6-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Ծովակ գյուղի վարչական ղեկավար Ռուբեն Ղանդիլյանը, Ծովակի 6-րդ փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 170 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է 6-րդ փողոցի ասֆալտապատում՝ 800 գծամետր երկարությամբ ու շուրջ 4800 քառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման եւ ոռոգման համակարգի ու սալիկապատ մայթի կառուցում:

2026 թվականի սեպտեմբերի 18-ի դրությամբ արդեն իրականացվել է շինարարական աշխատանքների շուրջ 50 տոկոսը: Ճանապարհը նախապատրաստվում է ասֆալտապատման: Իր ողջ պատմության ընթացքում Ծովակի 6-րդ փողոցի բնակիչներն առաջին անգամ են ասֆալտապատ ու բարեկարգ ճանապարհից ու մայթից օգտվելու հնարավորություն ստանում:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում:

19.qxd 27/09/2026 19:55 Page 4

ԸՆԴԼԱՅՆՎԵԼ ԵՆ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ԵՎ ՋՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդլայնվել են Գավառի համայնքի հողի եւ ջրի փորձաքննության լաբորատորիայի հնարավորությունները:

Սեպտեմբերին Գավառի հողի եւ ջրի փորձաքննության լաբորատորիա են այցելել ՀՀ ՏԿԵՆ Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության խորհրդական Աշոտ Գիլոյանը, Գերմանիայի դեսպանության Զարգացման համագործակցության բաժնի ղեկավար Կատրին Բուդեր-Փելցը, Շվեյցարիայի դեսպանության առաքելության ղեկավարի տեղակալ, Շվեյցարական զարգացման եւ համագործակցության գործակալության փոխտնօրեն Հարավային Կովկասում Ուրսուլա Լոյբլին եւ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության Խաղաղ եւ ներառական հասարակությունների ոլորտի համակարգող Թոմ Լանդեսը՝ տեղում ծանոթանալու լաբորատորիայի աշխատանքին եւ ձեռք բերված սարքավորումներին:

Գավառի համայնքապետարանը, համագործակցելով Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ, հողի եւ ջրի լաբորատորիան ստեղծել է 2024 թվականին, լաբորատորիայի հզորացումն իրականացվել է Գերմանիայի եւ Շվեյցարիայի կառավարությունների աջակցությամբ՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Տեղական զարգացման հիմնադրամ» միջծրագրային նախաձեռնության շրջանակում:

Բացի լաբորատորիայի սարքավորումներից, Գերմանիայի եւ Շվեյցարիայի կառավարությունների աջակցությամբ Գավառ համայնքին տրամադրվել են նաեւ գյուղատնտեսական տեխնիկա եւ սարքավորումներ, որոնք միտված են՝ աջակցելու համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը եւ լաբորատորիայի պատասխանատու Գուրգեն Մուխսիխչոյանը ներկայացրել են լաբորատորիայի գործունեության կարեւորությունը Գավառ համայնքում՝ նշելով, որ այն ծառայում է իր գլխավոր նպատակին՝ գյուղատնտեսական աշխատանքներն ավելի արդյունավետ, նպատակային եւ կայուն կազմակերպելու համար:

Գրիգոր Դաշտոյանը հյուրերին ներկայացրել է նաեւ համայնքապետարանի ողմից լաբորատորիայի հնարավորությունների ընդլայնման հետագա ծրագրերի մասին:

Գերմանիայի եւ Շվեյցարիայի կառավարությունների ցուցաբերած աջակցության շրջանակում Գավառ համայնքի ղեկավարին փոխանցվել է նաեւ Շարժական գրասենյակ, որը համայնքին կաջակցի՝ ծառայություններն ավելի մոտ եւ հասանելի դարձնելու բնակավայրերի բնակիչներին:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՓՐԿԱՐԱՐԻ ՕՐԸ ՆՇՎԵԼ Է ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ ՈՒ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐՈՎ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում փրկարարի օրը նշվել է ուսուցողական միջոցառումներով ու պարգեւատրման արարողությամբ:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, Փրկարարի օրվա տոնի շրջանակներում ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզի փրկարարական վարչության ՀՋՋ-ի եւ Սեւանի ՀՓՋ-ի ծառայողները Սեւանի համայնքապետարանի հարակից տարածքում նախադպրոցական եւ դպրոցական հաստատությունների սաներին ներկայացրել են իրենց առօրյան ու մասնագիտության առանձնահատկությունները: Երեխաները հնարավորություն են ունեցել՝ տեսնելու հրշեջ-փրկարարական եւ արագ արձագանքման մեքենաները, հատուկ տեխնիկան, փրկարարական գործիքներն ու հանդերձանքը:

Փրկարարները դպրոցահասակ երեխաների համար կազմակերպել են արագ արձագանքման եւ առաջին օգնության թեմայով ուսուցողական դասընթաց, իսկ գործնական պարապմունքների ընթացքում երեխաները մոտիկից ծանոթացել են փրկարարի կարեւոր ու պատասխանատու մասնագիտությանը:

Փրկարարի օրվա կապակցությամբ փրկարարական ծառայության ոլորտում ունեցած զգալի ներդրման, անբասիր ու նվիրված աշխատանքի, ինչպես նաեւ մասնագիտական բարձր պատրաստվածության համար ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզի փրկարարական վարչության ՀՋՋ-ի եւ Սեւանի ՀՓՋ-ի մի շարք ծառայողներ արժանացել են Սեւան համայնքի ղեկավարի շնորհակալագրերի, որոնք հանձնել է Սեւան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանը:

Արմինե Ղուկասյան

ԾԱԿՔԱՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԸ ՇՈՒՏՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԿԼԻՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար գյուղում կառուցված հանդիսությունների սրահը մինչ տարեվերջ արդեն պատրաստ կլինի շահագործման:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծակքարի հանդիսությունների սրահը կառուցվել է ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 145 միլիոն 900 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսվել է հանդիսությունների միհարկանի սրահի կառուցում՝ 540 քառակուսի մետր մակերեսով, որը պետք է ծառայի բնակիչներին՝ հոգեհանգստի, ծիսական արարողությունների եւ համայնքային այլ միջոցառումների կազմակերպման համար:

Շուրջ 3000 քմ հատկացված տարածքում կառուցված սրահն ապահովված է բոլոր անհրաժեշտ պայմաններով ու գույքով:

Փաստաթղթավորման գործընթացն ավարտվելուց հետո շենքը կմիանա խմելու ջրի, էլեկտրականության եւ կենցաղային գազի կոմունիկացիոն ցանցերին, ապա՝ պաշտոնապես կհանձնվի շահագործման:

Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանն օրերս այցելել է Ծակքար բնակավայրի նորակառույց հանդիսությունների սրահի տարածք՝ տեղում դիտարկելու կատարված աշխատանքները,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

ԳԱՎԱՌԻ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՅԹԵՐԻ ՍԱԼԻԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքի Շահումյան, Զորավար Անդրանիկ փողոցներում ու գերեզմանոց տանող ճանապարհին ընթանում են մայթերի սալիկապատման աշխատանքներ, որոնք իրականացվում են ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 65 միլիոն 700 հազար դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է Շահումյան եւ Զորավար Անդրանիկ փողոցների երկկողմանի մայթերի ու գերեզմանոց տանող ճանապարհի միակողմանի մայթերի սալիկապատում՝ 3540,4 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2026 թվականի օգոստոսի սկզբներից եւ ավարտի կհասցվեն սեպտեմբեր ամսի ընթացքում:

Շինաշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Ալվարդ Մանուկյան

ՍԱԼԱՐԿՎՈՒՄ Է ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ ՄՏՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ գյուղի գերեզմանոց մտնող հիմնական ճանապարհի սալարկման աշխատանքների մեկնարկն արդեն տրվել է ՀՀ կկառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Արծվանիստի գերեզմանոց մտնող ճանապարհի սալարկման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է շուրջ 10 միլիոն դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոց մտնող ճանապարհի սալարկում տուֆ քարով, 193 մետր երկարությամբ եւ 965 քառակուսի մետր մակերեսով: Բազալտե եզրաքարեր կտեղադրվեն շուրջ 400 գծամետր երկարությամբ:

Այս պահին ընթացքի մեջ են հողային աշխատանքները եւ բազալտե եզրաքարերի տեղադրումը:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Հայկ Հովհաննիսյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 110 ԵՐԵԽԱ

2026 թվականի օգոստոս ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող առողջապահական հիմնարկներում ծնվել է 110 երեխա:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, նորածիններից 68-ը տղա են, 42-ը՝ աղջիկ:

Նրանցից 21-ը ծնվել են Գավառի բժշկական կենտրոնում, 59-ը՝ Մարտունու ծննդատանը, 21-ը՝ Սեւանի բժշկական կենտրոնում, 9-ը՝ Վարդենիսի բժշկական կենտրոնում: Ճամբարակի առողջության կենտրոնում օգոստոս ամսին ծնունդ չի գրանցվել:

2025 թվականի օգոստոս ամսին Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում ծնվել է 134 երեխա՝ 78 տղա եւ 56 աղջիկ:

19.qxd 27/09/2026 19:55 Page 5

ՉՈՐԱԳՅՈՒՂԻ «ՍԱՆԳԱՐ» ԱՄՐՈՑԸ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀԻՆ ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐԸ

Չորագյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում, Սեւանա լճի հարավային ափին, Գեղամա լեռների հյուսիսարեւելյան ստորոտում, ծովի մակերեւույթից 2000 մետր բարձրության վրա:

Չորագյուղում Հուշարձանների պահպանության պետական ցանկում հաշվառված է Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակով թվագրվող 1 ամրոց, 2 դամբարանադաշտ, 1 քարայր-կացարան, 3 գյուղատեղի, 6 եկեղեցի, 3 մատուռ, 237 գեղաքանդակ խաչքար- տապանաքարեր:

Այդ հուշարձանների ցանկում ամենահնագույն հայտնի պատմամշակութային հուշարձանը համարվում է Ք.Ա. 2-1 հազարամյակով թվագրվող «Սանգար» կիկլոպյան ամրոցը, որը գտնվում է Չորագյուղից 1,7 կիլոմետր դեպի արեւմուտք, ծովի մակերեւույթից շուրջ 2200 մետր բարձրության վրա: Այն համարվում է Սեւանի ավազանի ամրաշինական ամենակարեւոր ու հզոր կառույցներից մեկը, որը գործել է հազարամյակներ շարունակ՝ պաշտպանելով բնակավայրը հարավից, արեւելքից ու արեւմուտքից սպառնացող թշնամիների հաճախակի կրկնվող ասպատակություններից:

Այս ամրոցի մասին շատ հարուստ ու հետաքրքիր տվյալներ է հաղորդում հայտնի հնագետ Գեդեոն Միքայելյանը «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» կոթողային աշխատության էջերում:

«Սանգար ամրոցը գտնվում է Չորագյուղից մոտ երկու կիլոմետր արեւմուտք, որը ամենախոշորն ու հզորն է ողջ Սեւանի ավազանում: Այն կառուցված է խորը կիրճի հյուսիսային համարյա ուղղածիգ ու ժայռապատ լանջերով սարահարթի վրա, որը մի ընդարձակ հրվանդանի ձեւով մտնում է երեք կողմից գահավեժ ձորերի մեջ: Սարահարթը փոքրիշատե մատչելի է իր հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան կողմերից: Սարահարթը, որի վրա գտնվում են ամրոցի ավերակները, շրջապատի ձորերի հատակից բարձր է 300-500 մետրով: Այդ բարձունքից երեւում են գեղատեսիլ Սեւանը ու նրան պարփակող լեռները:

Ամրոցը պարսպապատված է հրվանդանի եզրով անցնող գծով: Նրա շրջանագիծը հավասար է 650 մետրի: Երկարությունը մոտ 250 մետր է, միջին լայնությունը՝ մոտ 160 մետր՝ շուրջ 4 հազար քառակուսի մետր մակերեսով:

Ամրոցն ունի միջնապարիսպ, որը նրան բաժանել է երկու ոչ հավասար մասի, որից փոքրը՝ ձորաբերանի մասը, հանդիսացել է միջնաբերդը: Այն գրավում է մոտ 17 հազար քառակուսի մետր տարածություն: Ամրոցի ներսում կան բազմաթիվ բնակարանների ավերակների հետքեր, առավելապես՝ միջնաբերդում: Կացարանների հետքեր երեւում են նաեւ նրա պարիսպներից դուրս, հարավարեւմտյան կողմում: Միաշար պարսպի կրկնակի հետքեր կան ամոցի հյուսիսային կողմում, որոնք, մերթ հեռանալով գլխավոր պարսպից եւ մերթ մոտենալով, նրա արեւմտյան կողմից գալիս, միանում են հարավարեւմտյան աշտարակի հիմքին: Ամրոցից դեպի հյուսիս կան բոլորաձեւ դամբարաններ:

Ամրոցի արտաքին պարիսպների վրա երեւում են տարբեր մեծության աշտարակներ, միջնապարսպի վրա կան ավելի փոքրերը, որոնք դարձված են դեպի ամրոցի գլխավոր մուտքը: Աշտարակները միմյանցից համարյա հավասար հեռավորության վրա են դասավորված: Առաջին աշտարակը /6x12 մետր/ գտնվում է ամրոցի հարավարեւմտյան անկյունում, այնուհետ, մեկը մյուսից 25-30 մետր հեռավորությամբ դասավորված են երեք աշտարակ: Երկրորդ խոշոր աշտարակը կանգնած է միջնապարսպի եւ արտաքին պարսպի միացման հանգույցում, որը եւ արտաքին պարսպի կենտրոնն է: Հաջորդ աշտարակը, միջին մեծությամբ, գտնվում է նշված աշտարակի եւ մուտքի միջեւ: Մուտքի երկու կողմերում միջին մեծության աշտարակների ավերակներն են: Մուտքից դեպի հյուսիս-արեւելք , մինչեւ հյուսիսային անկյան խոշոր աշտարակը, կան միջին մեծության երկու աշտարակ, որոնք միմյանցից 25-30 մետր հեռավարություն ունեն... Այսպիսով, տեսնում ենք, որ «Սանգար» ամրոցն ունեցել է 16 աշտարակ, որոնք հիմնականում դարձված են դեպի արեւմուտք ու հյուսիս-արեւմուտք, այսինքն այն ուղղությամբ, որտեղից ամրոցին մոտենալն ավելի դյուրին է եղել: Աշտարակները, հզոր պարիսպները համարյա անհնարին են դարձրել ամրոցի գրոհումը:

«Սանգար» ամրոցի պարիսպների կառուցվածքը խիստ տարբերվում է մեզ ծանոթ կիկլոպյան ամրոցների պարիսպների հիմնական տիպի կառուցվածքից: Այստեղ արտաքին պարիսպն ամենուրեք ունի 5-6 մետր լայնություն, շարված խոշոր բազալտ քարի ժայռաբեկորներից, առանց միացնող շաղախի: Պարիսպը շարվել է ոչ թե երկշար, այլ եռաշար խոշոր քարերից, եւ ապա այդ շարքերի միջեւ եղած ազատ տարածությունները լցվել են փոքր քարով ու խճով:

Այս կարգի կառուցվածքը պարիսպն ավելի ամուր է դարձնում: Պարսպի եւ աշտարակների բարձրությունը «Սանգար» ամրոցում հավանորեն շատ բարձր է եղել: Դա երեւում է պարիսպներից ու աշտարակներից թափված ահռելի քանակությամբ քարերից: Չնայած այդպիսի ավերածությանը, պարսպի որոշ հատվածներում բարձրությունը պահպանվել է 5-6 մետրով: Եվ եթե ղեկավարվենք պայմանական այն նորմայով, որ պարսպի լայնությունը հարաբերվում է նրա բարձրությանը 1:3 հաշվով, ապա կստացվի, որ այս ամրոցի պարսպի բարձրությունը կազմել է շուրջ 15 մետր:

Միջնապարիսպը, համեմատած արտաքին պարսպի հետ, ավելի նեղ է՝ 3 մետր լայնությամբ, եւ շարված է սովորական ձեւով: Ամրոցի մուտքը գտնվում է նրա հյուսիսարեւմտյան պարսպամասում, լայնությունը 5 մետր է:

Ամրոցի հարավային մասը վերջանում է ժայռապատ ու գահավեժ լանջերով՝ խորը ձորի մեջ: Այդ անդունդի եզրից քիչ հեռու, ցածում, կան բազմաթիվ մեծ ու փոքր

բնական քարանձավներ, որոնք հավանաբար ծառայել են որպես կացարաններ: Դա երեւում է այն բանից, որ քարանձավների առջեւ կան հարթված փոքրիկ հրապարակներ, որոնց արտաքին եզրով կիսաշրջանաձեւ շարված է քարանձավի մուտքը: Քարանձավներում հայտնաբերվեցին, առանց պեղման, բազմաթիվ կավամանների բեկորներ, օբսիդիանի կտորներ եւ ընտանի կենդանիների ոսկորներ: Իսկ տեղացի հովիվները պատմում էին, որ տարիներ առաջ քարանձավներում գտնվել են նաեւ դամբարաններ՝ մարդկային կմախքներով: Քարանձավներից երկուսը , որոնք ամենամեծն են /40-60 քառակուսի մետր/, ունեցել են ստորերկրյա ելք դեպի ամրոցը, որոնցից մեկը պահպանվում է առ այսօր»,-գրում է Գեդեոն Միքայելյանը:

«Սանգար» ամրոցում 1990-ական թվականների վերջերին հնագիտական ուսումնասիրություններ են կատարվել նաեւ հայ-իտալական միացյալ արշավախմբի կողմից:

«Սանգար» ամրոցը տարածվում է պատմական մի քանի հնագույն հուշարձաններին շատ մոտիկ, որոնցում եւս ամփոփված է պատմամշակութային հարուստ շերտ: Դրանցից մեկը Վարդաձոր գյուղի վարչական տարածքում, Վարդաձորի արեւելյան կողմում գտնվող Տուլիխու կամ Քռայի ամրոցն է, որը թվագրվում է Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակով, գրեթե նույն տարիքով, ինչը Սանգար ամրոցի պարագայում է: Ավելին, սա այն հանրահռչակված հնավայրն է, որտեղից 1862 թվականին Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը հայտնաբերել է Ուրարտուի արքա Սարդուր Երկրորդի սեպագիր արձանագրությունը՝ բաղկացած յոթ տողից: «Այս Ադամխան գյուղի հանդի ներքեւն ծովափանց մոտ ձորաբերանին մի քարի վերա գտինք 7 տող բեւեռաձեւ արձանագիր, որո օրինակն 1863 թվին հրատարակվեց Մոսկվայի համբավաբեր Ռուսիո հայերեն շաբաթաթերթի մեջ...Այս բեւեռաքարը Արծրունի Բարսեղ աղան բերել տվեց Նոր Պայազիտ 1865 թվականին, եւ 1866 թվին փոխադրել են Տփղիսու հնագիտական թանգարան հրամանավ փոխարքա մեծ իշխան Միխայել Նիկոլայեւիչի,-գրում է Մեսրոպ Սմբատյանցը:

Սմբատյանցն իր գրքում տեղադրել է նաեւ սույն արձանագրության բովանդակությունը, որը կարդացվում է այսպես. «Սարդուրի, Իբիտի որդին ասե. շնորհիվ Խալդիացվոց ողորմած Աստուծույն՝ ես ավար առի Տուլիուն արքայական քաղաքը եւ գերեցի Սինալիբինին, Սիեր թագավորի որդվույն: Դուրս բերեցի Ուդուրիեդինի երկրից Սինալիբին թագավորի մարդկանց եւ կանանց»:

Տուլիխու կամ Քռայի քաղաք ամրոցը Սանգարից գտնվում է ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա, իսկ դրանց շրջակայքերում քիչ թիվ չեն կազմում հնագույն բնակատեղիներն ու սրբատեղիները:

Եվ եթե Վանի թագավոր Սարդուր Երկրորդն իր արձանագրության մեջ հիշատակում է թագավորության, անգամ թագավորի անունն ու հայրանունը, ապա շատ պարզ է, որ Տուլիխուի թագավորությունը չէր կարող սահմանափակվել միայն մի քանի հեկտար տարածքով կամ մի քանի բնակավայրերով:

Տողերիս հեղինակին ժամանակին բախտ է վիճակվել հարցազրույց վարել հայ-իտալական հնագիտական միացյալ արշավախմբի ղեկավար Ռաֆայելե Բիշիոնեի հետ, որտեղ նա կարծիք հայտնեց այն մասին, որ միջին ուրարտական արշավանքները Սեւանա լճի ավազանը կազմել է պետական մի հզոր միավորում, որտեղ ընդգրկված են եղել պետական փոքր կազմավորումներ, ու Տուլիխուն եղել է ուրարտական արձանագրություններում հիշատակված Զրային էթիունի երկրի վարչական կենտրոնը:

Ու բնական է, որ նրան բոլոր կողմերից պետք է շրջապատեին հզորագույն բերդ-ամրոցները՝ պատնեշելով թշնամական բանակների մուտքը բոլոր կողմերից: «Սանգարը» Տուլիխու թագավորանիստ քաղաքը պատնեշել է հարավից: Արեւմուտքից նրան պատնեշել են Վարդաձորի Դարերի ու Երանոսի Նեղ Բողազի ամրոցները, հյուսիսից՝ Սեւանա լճի ափին մոտիկ տարածվող Ներքին Դեմեր ամրոցը:

Սանգարից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ գտնվում է Վարդաձորի Շմակավանքը, որի մոտակայքում տարածվում են հնագույն բնակավայրի , անգամ ջրաղացների ավերակները: Շմակավանքին մոտիկ մինչ օրս պահպանվում է վաղ միջնադարյան քառակոթող, ինչը հուշում է այն մասին, որ հոգեւոր այս կառույցը գործել է 5-7-ր դարերում, գուցե նաեւ նախաքրիստոնեական դարաշրջաններում:

Սանգարից ու Շմակավանքից մի քանի կիլոմետր հեռավորությամբ Սպիտակասարի արեւելյան ստորոտներում հայտնաբերվել են ժայռապատկերներ, որոնք արտացոլում են որսի կենդանիներ կամ որսի տեսարաններ, որոնք արդեն տարածքի պատմությունը տեղափոխում են նախապատմական ժամանակներ:

Սանգարից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ տարածվում են Ալթունի թախտ կոչվող բնակավայրի ավերակները, որոնք եւս ընդգրկված են Հուշարձանների պահպանության պետական ցանկում՝ թվագրվելով 9-17-րդ դարերով: Դժվար չէ կռահել, որ այս գյուղի բնակիչները հայկական մյուս բնակավայրերի բնակիչների հետ տեղահանվել են 1604-1605 թվականների թուրք-պարսկական պատերազմների հետեւանքով ու պարսից Շահ Աբասի կողմից կազմակերպված բռնագաղթի արդյունքում:

«Սանգար» ամրոցից 200 մետր դեպի հյուսիս հաշվառված է Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակներով թվագրող դամբարանադաշտ, ամրոցի հարավային կողմում՝ նույն դարաշրջաններում թվագրվող քարայր-կացարաններ ու «Սելգնա» կոչվող բնակատեղին:

«Սանգարի» արեւմտյան կողմում, Շմակավանքի դիմաց, պահպանվել է 9-12-րդ դարերով թվագրվող պատմական գերեզմանոց, ուր առկա են տասնյակի չափ հիասքանչ խաչքարեր, որոնք կերտվել են նույն ժամանակներում:

Ալթունի թախտ գյուղատեղիում պահպանվել են 11-13-րդ դարերով թվագրվող եկեղեցի, 10-13-րդ դարերի գերեզմանոց ու վեց գեղաքանդակ խաչքարեր:

Տասնյակի չափ գեղաքանդակ խաչքարեր են պահպանվել նաեւ «Սանգարի» հարավարեւելյան ու հյուսիսարեւելյան կողմերում:

Սանգարի արեւելյան կողմից ընդամենը մեկուկես կիլոմետր հեռավորությամբ գտնվում է հռչակավոր Շողագավանքը, որի հիմնադրման բուն թվականը համարվում է 9-րդ դարը, իսկ նրա շրջակայքի պատմական մեծ գերեզմանոցի բազմաքանակ ու բազմաբովանդակ խաչքար-տապանաքարերն արտացոլում են վաղ միջնադարից մինչ ուշ միջնադար ընկած պատմական ժամանակահատվածը:

Հավելենք նաեւ, որ Սպիտակասարի արեւելյան ստորոտում, «Սանգարից» մի քանի կիլոմետր դեպի հարավ ծփում են մեկ մեծ ու մեկ փոքր լճեր, որոնց ջրերով կարող էին սնվել այս ամրոցն ու նրան մոտիկ մյուս ամրոցներն ու բնակավայրերը: Բացի այդ, ամրոցից դեպի հարավ ընկած բարձրություններում առկա են բազմաթիվ աղբյուրների ակունքներ, որոնք կարող էին մշտական ջրով ապահովել մարդկանց:

«Սանգարի» հարավային կողմի ժայռազանգվածներում ցածում, ահռելի մեծության քարերի արանքից սառը եւ հորդ աղբյուր է խոխոջում՝ միանալով Շողվագ գետի ջրերին: Չորագյուղում այն հայտնի է Լուսաղբյուր անունով: Բնական է, որ բնակիչներին սնուցող հիմնական աղբյուրը հենց սա եղել, ուր մարդիկ խաղաղ ժամանակներում ջուր տանելու են եկել բաց արահետներով, իսկ պատերազմական դրության ժամանակ՝ արդեն գաղտնուղիներով:

Իսկ այդ գաղտնուղիները, որոնք գտնվում են քարանձավներում, ապշեցնում են իրենց բազմաքանակությամբ: Դրանց թիվը, ըստ մեզ ուղեկցող Գրիգոր Գրիգորյանի եւ Սարո Ղազարյանի, կարող է հասնել շուրջ 2 տասնյակի:

Մենք հասցրինք մուտք գործել մի քանի քարանձավներ, որոնցից երկուսն առավել մեծ մակերեսներ էին զբաղեցնում՝ կից մուտքերով ու սենյակներով, նույնիսկ դեպի ամրոց տանող ելքերով: Մեր խմբի անդամները մի ընդարձակ քարանձավից հավաքեցին խեցեղեն իրերի բազմաթիվ կտորներ, որոնցից մի քանիսը լուսանկարային տարբերակով ուղարկեցի ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանին՝ դրանց պատրաստման ստույգ ժամանակը որոշելու նպատակով: Ստացված մասնագիտական եզրակացության համաձայն՝ խեցեգործական այս իրերը պատրաստվել են Քրիստոսից առաջ 3-րդ-ից մինչեւ Քրիստոսից հետո 3-րդ դարերում: Ասել է, թե Վանի թագավորության կողմից կատարված նվաճումներից հետո էլ «Սանգար» ամրոցում ու նրա շրջակայքի բնակավայրերում կյանքի եռուզեռը մշտապես շարունակվել է, ինչին առավելապես նպաստել են առատ ու անսահման արոտավայրերը, ջրային պաշարները, որսի կենդանիները, անասնապահության, երկրագործության, արհեստագործության, ձկնորսության, առհասարակ զբաղվածության համար առկա բոլոր պայմաններն ու հնարավորությունները:

Երբ ամրոցի բարձունքից չափում ես Գեղամա լեռնաշղթայի բարձրաբերձ կատարները, Սեւանա լճի հայելին, ոտքերիդ տակ փռված, գլխապտույտ առաջացնող անդնդախոր ձորերը, հսկայական քարերով շարված պարիսպների լայնությունն ու ծգվածությունը, արդեն մտքումդ ամբոջանում է այն հզորությունը, ռազմունակությունը, պաշտպանական կառույցների աներեւակայելի ճարտարապետական միտքը, կենսասիրությունը, պայքարելու, արարելու ու մաքառելու կամքը, որ կրել են մեր հեռավոր նախնիները՝ հազարամյակների մեջ կռելով, կերտելով ու հայ սերունդներին փոխանցելով հայրենի այս բնօրրանը, որի գաղտնախորհուրդ պատմությունը դեռ պիտի բացահայտվի նոր ուսումնասիրություններով, նոր հայտնագործություններով:

Խոսրով Խլղաթյան

19.qxd 27/09/2026 19:55 Page 6

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԿԲԱՑՎԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Չնայած Սեւան համայնքի Գեղամավան գյուղում 2022-ի տարեվերջին գործարկվել է նախադպրոցական այլընտրանքային ծառայություններ, այդուհանդերձ, տարիների ընթացքում պարբերաբար համայնքում քննարկվել է մանկապարտեզ չունեցող բնակավայրերում նախադպրոցական կրթությանն ուղղված ծրագրերի վերանայման հարցը, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ Գեղամավանում դեռեւս 2016 թվականին հիմնանորոգվել էր մանկապարտեզի շենքը, սակայն չէր գործարկվել: Շենքը համապատասխանում է ժամանակակից չափորոշիչներին, որտեղ կարող են լիարժեք կազմակերպվել բնակավայրի փոքրիկներին նախադպրոցական կրթությանը, խնամքի եւ դաստիարակությանն ուղղված գործառույթները:

Գեղամավանում մանկապարտեզ բացելու խնդիրը քննարկվել էր դեռեւս Սեւան համայնքի ավագանու 9-րդ նստաշրջանի վերջին նիստում, եւ օրերս էլ բնակավայրում հրավիրվել է համայնքային ժողով՝ մասնակցությամբ Սեւան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանի, Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի պետ Նարինե Հարությունյանի, Գեղամավան բնակավայրի վարչական ղեկավար Գագիկ Խաչատրյանի:

Համայնքային ժողովի մասնակիցները բնակիչների հետ քննարկել են բնակավայրում նախադպրոցական ուսումնական հաստատություն ունենալու անհրաժեշտությունը, դրա համար առկա նախապայմանները, ինչպես նաեւ հետագա անելիքներն իրավական, կազմակերպչական, տեխնիկական առումներով:

Անդրադարձ է կատարվել նախադպրոցական տարիքի երեխաների թվին, բնակավայրում փաստացի բնակվող երեխաներին, տեղեկատվություն ներկայացվել համայնքի այլ մանկապարտեզներ հաճախող երեխաների վերաբերյալ:

Ի մի բերելով առաջարկները, համայնքային հնարավորությունները եւ հիմք ընդունելով Գեղամավանում մանկապարտեզ բացելու անհրաժեշտությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ հանրապետությունում գերակա է կրթության շարունակականության առաջին օղակի գործարկումը, նախադպրոցական տարիքի երեխաների համար մեկնարկային հավասար պայմանների ստեղծումը՝ Սեւան համայնքի ավագանու 10-րդ նստաշրջանի 1-ին նիստում՝ սեպտեմբեր ամսին, կքննարկվի Գեղամավան բնակավայրում մանկապարտեզ բացելու եւ ՀՈՒԿ ստեղծելու հարցը, որին կհաջորդեն կազմակերպչական եւ տեխնիկական խնդիրների լուծման փուլերը:

Արմինե Ղուկասյան

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ՝ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԴՈՒԴՈՒԿԱՀԱՐ ԳԵՎՈՐԳ ԴԱԲԱՂՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի երաժշտական դպրոցում սեպտեմբերի 10-ին հյուրընկալվել է վաստակավոր դուդուկահար Գեւորգ Դաբաղյանը:

Այցի շրջանակներում երաժշտագետը վարպետաց դաս է անցկացրել դպրոցի ժողովրդական գործիքների բաժնի դուդուկի դասարանի աշակերտների հետ, որին մասնակցել են նաեւ դասատուները:

Հանդիպումն անցել է ջերմ մթնոլորտում, որի ընթացքում մասնակիցները ստացել են արժեքավոր խորհուրդներ, ինչպես նաեւ նվագելու եւ դասավանդելու նոր հմտություններ:

Գեւորգ Դաբաղյանն իր նախաձեռնությամբ եւ մակագրությամբ դպրոցին է նվիրել դուդուկի ձեռնարկ-գիրք:

Բացի այդ, վարպետը դուդուկի բաժնի ուսուցիչներին եւ աշակերտներին հրավիրել է Երեւան՝ ներկա գտնվելու Երեւանի պետական կոնսերվատորիայում եւ Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում անցկացվող իր դասաժամերին:

Երաժիշտը նաեւ խոստացել է՝ առաջիկայում նորից այցելություններ կատարել Մարտունի համայնք եւ դրանց ընթացքում փոխանցել նոր հմտություններ ու մասնագիտական խորհուրդներ:

Երաժշտական դպրոցի տնօրեն Ա. Ասիկյանի փոխանցմամբ՝ ստեղծագործական բարձր տրամադրությամբ անցած այս հանդիպումը մեծ լիցքեր է փոխանցել մեր երիտասարդ երաժիշտներին եւ մանկավարժներին:

Հայկ Հովհաննիսյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԱՐՏԵՐԿՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԲՈՒՀԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՆ

Սեպտեմբերիին Գավառի պետական համալսարանի հյուրերն են եղել ԱՄՆ Վաշինգթոնի համալսարանի Ամերիկյան էթնիկ հետազոտությունների բաժնի վարիչ, դասախոս Ռիկ Բոնուսը եւ Ռուս-հայկական համալսարանի Համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս Իվան Դանիլովը:

Հյուրերին ընդունել է Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության հնարավորությունները, ակադեմիական փոխանակման ծրագրերի իրականացման հեռանկարները:

Ռիկ Բոնուսը եւ Իվան Դանիլովը սեմինար-քննարկում են անցկացրել ԳՊՀ ուսանողների հետ:

Հյուրերն այցելել են Գավառի պետական համալսարանի պատմագիտական թանգարան:

-Նման հեղինակավոր, միջազգային լայն ճանաչում ունեցող բուհերի ներկայացուցիչների հետ շփումների ու կապերի հաստատումը շատ ավելի արդյունավետ ու նպատակասլաց են դարձնում մեր աշխատանքը՝ Գավառի պետական համալսարանը միաժամանակ ճանաչելի դարձնելով աշխարհի տարբեր երկրներում: Հյուրերը տպավորված հրաժեշտ տվեցին մեզ՝ համագործակցության հետագա ակնկալիքով-, նշել է Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ՝ «ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ

ՀՀ Գեղարքունիքի մարզը ակտիվ մասնակցություն է ունեցել Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում անցկացվող «Մշակութային վերածնունդ. Արվեստների եւ արհեստների համահայկական փառատոնի» 15 ամյակին նվիրված միջոցառմանը, որը կազմակերպվել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ:

Գեղարքունիքի մարզի պատվիրակության կազմում ընդգրկվել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, մարզի համայնքապետարանների, կրթամշակութային հաստատությունների, արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, երաժիշտներ եւ պարային խմբեր:

Ցերեկույթի ընթացքում Գեղարքունիքի մարզի մշակութային ներուժը ներկայացրել է Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության գլխավոր մասնագետ Արփիկ Չքոլյանը:

«Տուրիզմը միավորում է մշակույթներ» խորագրով փառատոնի ընթացքում ցուցադրվել են Գեղարքունիքի մարզի Սեւանի Հովհաննես Այվազովսկու անվան արվեստի դպրոցի, Սեւանի մշակութային կենտրոնի, Մարտունու արվեստի դպրոցի շնորհալի սաների ձեռքի աշխատանքները, Գեղարքունիքի երկրագիտական թանգարանը ներկայացրել է թանգարանային տարբեր ցուցանմուշներ, Գավառի տարածաշրջանին բնորոշ թխվածքներ:

Փառատոնի ընթացքում անցկացվել են նաեւ վարպետաց դասեր, կազմակերպվել է հյուրասիրություն:

Գեղարքունիքի մարզից երաժշտական եւ պարային կատարումներով հանդես են եկել Սեւանի «ԳԱՄՄԱ» բենդի երգիչ Գուրգեն Մկրտումյանը, Սեւանի մշակութային կենտրոնի «Սեւան» ժողովրդական պարերի համույթը: Մասնակիցները հանդես են եկել միասնական շուրջպարով:

Փառատոնի ավարտին մասնակիցները գնահատող հանձնաժողովի կողմից խրախուսվել են հավաստագրերով:

ՍԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԻ ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Սեպտեմբերի 9-ից պաշտոնապես իր դռներն է բացել Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի նորոգված ու վերազինված դահլիճը:

Դահլիճի վերանորոգումն իրականացվել է Գերմանիայի եւ Շվեյցարիայի կառավարությունների ֆինանսավորմամբ, «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացրել է GIZ-ը՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության պատվիրակմամբ,Հայաստանում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության համաֆինանսավորմամբ եւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Սեւանի մշակույթի պալատի դահլիճը բացման արարողությանը ներկա են եղել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության Զարգացման համագործակցության բաժնի ղեկավար Կատրին Բուդեր-Փելցը, ՀՀ-ում Շվեյցարիայի դեսպանության առաքելության ղեկավարի տեղակալ, Հարավային Կովկասում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության փոխտնօրեն Ուրսուլա Լոյբլին, GIZ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Սոնյա Կուրցը, պաշտոնատար այլ անձինք եւ ծրագրի գործընկերներ:

Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի անունից ողջունելով ներկաներին՝ Սեւան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանը նշել է, որ իրականացվել է քաղաքացիակենտրոն նախաձեռնություն, որը նոր փուլի սկիզբ է: Դրան կհաջորդեն նոր ծրագրեր ու գաղափարներ, մշակութային միջոցառումներ եւ համայնքային կյանքի աշխուժացմանն ուղղված նոր նախաձեռնություններ:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանն իր խոսքում կարեւորել է GIZ-ի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի նշանակությունը՝ ընդգծելով, որ դրանց շնորհիվ համայնքները դառնում են ավելի հաշվետվողական, թափանցիկ եւ քաղաքացիներին մոտ:

Շնորհակալություն հայտնելով արդյունավետ համագործակցության համար՝ Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանը Սեւան համայնքի ղեկավարի անունից շնորհակալագրեր է հանձնել ծրագրի պատասխանատուներին եւ իրականացնողներին:

Իսկ միջոցառման հանդիսավոր հատվածը եզրափակվել է գեղեցիկ համերգային ծրագրով, որը պատրաստել էին Սեւանի մշակույթի կենտրոնը, Սեւանի երաժշտական դպրոցը եւ «Գամմա Բենդը»:

Վերանորոգված ու նոր գույքով կահավորված տարածքը նախատեսված է արտադպրոցական կրթության, համերգների, թատերական ներկայացումների, համայնքային միջոցառումների համար:

Արմինե Ղուկասյան

19.qxd 27/09/2026 19:55 Page 7

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՎԱԼԳԱՄԱ» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանն ընդունել է Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի հետ միջազգային համագործակցության շրջանակում Վարդենիս ժամանած էստոնիայի «Վալգամա» մասնագիտական կրթության կենտրոնի պատվիրակությանը՝ կենտրոնի տնօրեն Մարգուս Օխաուտսի գլխավորությամբ:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, հանդիպման ընթացքում քննարկվել են մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության զարգացման, փորձի փոխանակման, համատեղ նախաձեռնությունների իրականացման եւ հետագա համագործակցության նոր հնարավորությունների վերաբերյալ հարցեր:

Հատկապես կարեւորվել է Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի եւ Վալգամա մասնագիտական կրթության կենտրոնի միջեւ ձեւավորված գործընկերությունը՝ որպես մասնագիտական կրթության որակի բարելավման, կառավարման արդյունավետության բարձրացման եւ միջազգային լավագույն փորձի փոխանակման կարեւոր հարթակ:

-«Վալգամա» մասնագիտական կրթության կենտրոնի պատվիրակության այցը կարեւոր հնարավորություն է՝ Վարդենիս համայնքը միջազգային գործընկերներին ներկայացնելու, համայնքի եւ մասնագիտական կրթության զարգացման ուղղությամբ նոր կապեր հաստատելու եւ ապագա համատեղ ծրագրերի հիմքերն ամրապնդելու համար,-ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

Հանդիպման ընթացքում Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի տնօրեն Ա. Սիրադեղյանը շնորհակալություն հայտնեց համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանին՝ պատվիրակության եւ քոլեջի ներկայացուցիչների ջերմ ու հյուրընկալ ընդունելության, ինչպես նաեւ միջազգային համագործակցությանն ու քոլեջների միջեւ կապերի ամրապնդմանն աջակցելու պատրաստակամության համար:

ԾԱՂԿՈՒՆԲՈՒՄ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ԳԼՈՒԽ ՈՉԽԱՐՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ԴԵՊՔ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծաղկունք գյուղում կրկին հարյուրավոր գլուխ ոչխարների ու գառների անկման դեպք է արձանագրվել:

Ինչպես տեղեկացրեց Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի վարիչ Ռադիկ Մանուկյանը, գրեթե նույնությամբ, նույն վայրում կրկնվել է այս տարվա հունիսի 6-ին արձանագրված դեպքը Ծաղկունք գյուղի բնակիչ Գուրգեն Գեւորգյանի փարախում, երբ անկած 208 գլուխ ոչխարները հոշոտված չեն եղել, կենդանիների մարմնների վրա ծակված կամ ճանկռված տեղեր չեն նկատվել:

Այս անգամ էլ արտակարգ այս դեպքը դժվար է կապել գայլերի հարձակման հետ: Միայն տարբերությունն այն է, որ անկած ոչխարների թիվը որոշակիորեն ավելին է նախորդից՝ հասնելով մոտ 300-ի:

-Գուրգեն Գեւորգյանն իր տնտեսության փարախում պահում է իր ու գյուղացիների ոչխարները: Վաղ առավոտյան նա նկատել է, որ ոչխարները կուտակված են իրար վրա, որոնց մի մասը չի շարժվում: Դժվար է առայժմ եզրակացնել, թե ինչի հետեւանքով են սատկել ոչխարները: Միայն փաստն այն է, որ այդ 300 գլուխ ոչխարները կուտակված են եղել 20-25 քառակուսի մետր տարածքում, իրար վրա, մի քանի շերտով: Վերեւի շերտում գտնվող կենդանիները ողջ են, կենսունակ վիճակում, մինչդեռ ներքեւի շերտում գտնվածներն անկենդան են եւ ունեցել են քթային արնահոսություն:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ Սեւանի ոստիկանության, փրկարար ծառայության աշխատակիցները, Գեղարքունիքի մարզպետի եւ Սեւանի համայնքապետարանի աշխատակազմերի ներկայացուցիչները, համայնքի անասնաբույժը, մասնագիտական այլ կառույցների աշխատողներ: Առայժմ դժվարանում ենք պարզել այս առեղծվածը, որը նույն տարում կրկնվում է երկրորդ անգամ: Բոլոր դեպքերում, լուրջ վնաս են կրել Ծաղկունքի ոչխարաբուծական տնտեսությունները, իսկ հովիվը՝ Գուրգեն Գեւորգյանը, նման արտակարգ պատահարի հետեւանքով հայտնվել է դժվարին վիճակում: Նա խնամքի տակ ունի չորս անչափահաս երեխա եւ սոցիալապես անապահով է: Անկած ոչխարների միսը պիտանի չէր օգտագործման, որն ամբողջությամբ ոչնչացվել է: Վնասների հնարավոր չափերը ճշտվում են,- ներկայացրեց Ռադիկ Մանուկյանը:

Գեղամա աշխարհ

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՔՆԱՊԵՏԱՐԱՆԸ ԿԱՊԻՏԱԼ ՈՒ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 10 ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ

Գավառի համայնքային գրադարանը եւ բնակավայրերում գործող ինը տարածքային ստորաբաժանման գրադարանները 2025 եւ 2026 թվականներին համայնքի բյուջեից ստացել են կապիտալ դրամաշնորհներ՝ գրաֆոնդերը թարմացնելու եւ աշխատանքների կազմակերպման նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու նպատակով:

2026 թվականին համայնքային գրադարանին եւ տարածքային ստորաբաժանումներին համայնքապետարանի կողմից տրամադրվել են 3 միլիոն դրամ կապիտալ եւ 850 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհներ: Ձեռք են բերվել գրքերի ցուցադրական եւ գրացուցակի պահարաններ, քարտադարաններ, մանկական աթոռներ, 3 դյուրակիր եւ գերհզոր համակարգիչներ, հեռուստացույց, փոշեկուլ, միկրոալիքային վառարան, սառնարան եւ 285 կտոր գրականություն:

Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեից էլ համայնքային գրադարանին եւ ստորաբաժանումներին

4 միլիոն 652 հազար դրամ կապիտալ եւ 1միլիոն 962 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհներ են հատկացվել:

2025 թվականի կապիտալ եւ ընթացիկ դրամաշնորհներով դարձյալ համայնքային գրադարանը եւ տարածքային ստորաբաժանումները ձեռք են բերել անհրաժեշտ գույք, տեխնիկա, գրքեր եւ անհրաժեշտ այլ միջոցներ, լրագրասեղաններ, բազմոցներ, բազկաթոռներ, աթոռներ, մուտքի ցուցանակներ, աշխատանքային եւ կենցաղային պարագաներ:

Հատկացված դրամաշնորհների արդյունքում Գավառի համայնքային գարադարանը եւ տարածքային 9 ստորաբաժանումները հատկացված դրամաշնորհների արդյունքում թարմացրել են իրենց գրական ֆոնդերը, ձեռք բերել անհրաժեշտ ու նոր գույք՝ բարելավելով իրենց աշխատանքային պայմաններն ու հնարավորությունները:

Ալվարդ Մանուկյան

«ԵՄ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՇԱԲԱԹ-2026»-Ը ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄՓՈՓՎԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՄԲ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արեւելք» ծրագրի կողմից պարգեւատրվել են «ԵՄ Կայուն էներգիայի շաբաթ-2026»-ի շրջանակներում համայնքում անցկացված մրցույթների հաղթողները եւ կայուն էներգիայի օրերի ակտիվ մասնակիցները:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, Գավառ համայնքի ղեկավարի հավաստագրով ու գիրք-հուշանվերով պարգեւատրվել են Ֆեյսբուկյան էջում հավանումների թվով նկարչական մրցույթում հաղթող ճանաչված Արփի Աբրահամյանը, լուսանկար-էսսե մրցույթում՝ Գոհար Խաչատրյանը, տեսանյութերի մրցույթում՝ Գանձակի N 2 միջնակարգ դպրոցը, պաստառների մրցույթում՝ Ռիմա Բագրատյանը, ձեռագործական աշխատանքների մրցույթում՝ Գանձակի N 2 միջնակարգ դպրոցը, ժյուրիի անձնակազմի համակրանքին արժանացած նկարչական մրցույթում՝ Յուրա Կիրակոսյանը, Արփի Ափրեյանը եւ Նարե Խաչատրյանը, լուսանկար-էսսե մրցույթում՝ Լիաննա Գրիգորյանը, տեսանյութերի մրցույթում՝ Գավառի թիվ 5 հիմնական դպրոցը, պաստառների մրցույթում՝ Զարուհի Ղուրշուդյանը, ձեռագործական աշխատանքների մրցույթում՝ Մարկ Մարտիրոսյանը, Անգելինա Հակոբյանը, Դավիթ Բադեյանը, լավագույն ու ակտիվ կազմակերպիչները՝

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշեւի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը, Գավառի թիվ 3 մսուր մանկապարտեզը, Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոցը:

Ծրագրի կողմից խորհրդանշական նվերներ են ստացել Գանձակի մշակույթի տունը, Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը, Գավառի թիվ 8 մսուր-մանկապարտեզը, Գավառի թիվ 3 մսուր-մանկապարտեզը, Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցը, Գավառի համար 5 միջնակարգ դպրոցը եւ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշեւի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը:

Պարգեւները հանձնել են Գավառի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, զարգացման ծրագրերի պատասխանատու Հակոբ Սարգսյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Հռիփսիմե Ջանգիզորյանը եւ Քաղաքապետերի դաշնագիր՝ Արեւելք ծրագրի Հայաստանի ազգային փորձագետ Արտեմ Խարազյանը:

«ԵՄ Կայուն էներգիայի շաբաթ-2026»-ի ընթացքում Գավառում կազմակերպվել է 17 միջոցառում՝ թեմատիկ դասընթաց եւ էքսպո, բնապահպանական-կրթական միջոցառումների շարք, քուիզ, թեմատիկ բաց պարապմունքներ՝ մանկապարտեզներում, թեմատիկ դասընթացների եւ բանավեճերի անցկացում, ինտելեկտուալ խաղ, վիկտորինա, նկարչական մրցույթ եւ այլն: Միջոցառումներին մասնակցել է ավելի քան 1600 մարդ:

Ալվարդ Մանուկյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Լեռնագործների փողոցի հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը տրվել է 2026 թվականի օգոստոսից:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Վարդենիսի Լեռնագործների փողոցի հիմնանորոգման ընթանում են Մ-10-Սեւան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ սահման միջպետական նշանակության ճանապարհի 9 կիլոմետրանոց հատվածի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում,որի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 977 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Լեռնագործների փողոցը հիմնանորոգվում է 1300 գծամետր երկարությամբ եւ 14500 քառակուսի մետր մակերեսով:

Այժմ իրականացվում են բազալտե եզրաքարերի տեղադրման, մայթերի ասֆալտապատման, դիտահորերի բարձրացման, ինչպես նաեւ շուրջ 14 500 քմ մակերեսի հիմքի եւ ասֆալտբետոնե ծածկի կառուցման աշխատանքներ:

Ծրագրի ավարտին ճանապարհը կկահավորվի անհրաժեշտ ճանապարհային նշաններով եւ գծանշմամբ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում:

Աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով օրերս Լեռնագործների փողոցի շինհրապարակ է այցելել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

19.qxd 27/09/2026 19:55 Page 8

Համաձայն «ՀՀ տոների եւ հիշատակի օրերի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 345-Ն օրենքի 29-րդ հոդվածի՝ Երեւանի եւ մարզերի օրերը նշվում են սեպտեմբերի 5-ին հաջորդող առաջին շաբաթ օրվանից սկսած:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզի Սեւանի, Մարտունու եւ Վարդենիսի համայնքապետարանների աշխատակազմերից, Գեղարքունիքի օրը նշվել է սեպտեմբերի 12-ին, որի շրջանակներում միջոցառումներ են տեղի ունեցել մարզի տարբեր բնակավայրերում:

Սեւան համայնքում տեղի են ունեցել միջոցառումներ, որոնցից մեկն էլ հեղինակել է «Ծովեմ» երիտասարդական կենտրոնը:

Սեպտեմբերի 12-ի առավոտյան երիտասարդական կենտրոնի պատանիներն ու երիտասարդները ճանապարհվել են Ծովագյուղ բնակավայրի Կակաչ լիճ՝ անցկացնելով հետաքրքիր եւ բովանդակալից օր բնության գրկում:

Օրվա ընթացքում նրանք բացահայտել են Սեւան համայնքի առանձնահատկությունները, առկա մարտահրավերներն ու զարգացման հնարավորությունները:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՄԱՐԶԻ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Ցուցահանդեսի շրջանակում դպրոցի սաների կողմից ներկայացվել են Գեղարքունիքի մարզի հարուստ պատմամշակութային ժառանգությունն արտացոլող գեղարվեստական աշխատանքներ: Երիտասարդ նկարիչներն իրենց ստեղծագործություններում յուրովի ներկայացրել են մարզի պատմական եւ մշակութային արժեքները, ճարտարապետական հուշարձաններն ու տեսարժան վայրերը՝ ընդգծելով հարազատ բնաշխարհի գեղեցկությունն ու պատմական նշանակությունը:

Գեղարքունիքի օրվան նվիրված միջոցառում է կայացել Մարտունի համայնքի Աստղաձոր գյուղում: Տոնական օրվա շրջանակում ներկայացվել են հայ ազգային երգն ու պարը, որոնք իրենց առանձնահատուկ տեղն ունեն մեր ժողովրդի մշակութային ժառանգության մեջ:

Գեղարքունիքի օրվա կապակցությամբ Վերին Գետաշենի մշակույթի կենտրոնի «Աբգարյան» պարային համույթի պարուհիները հանդես են եկել պարային համարներով, իսկ կենտրոնի հաղորդավար Լուսյա Սմբատյանը հաղորդման ընթացքում հետաքրքիր ու բովանդակալից փաստեր է ներկայացրել Գեղարքունիքի մարզի մասին՝ անդրադառնալով նրա պատմական անցյալին ու ներկային:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՆԱՆՑ

«Կանանց տնտեսական հզորացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն «Գենդերազգայուն բյուջետավորման նախաձեռնությունների» միջոցով, աջակցություն է տրամադրել Վարդենիս համայնքին:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Փոքր Մասրիկ, Արփունք եւ Գեղամասար բնակավայրերի հանդիսությունների սրահներին տրամադրվել է անհրաժեշտ սպասք՝ համայնքային միջոցառումների կազմակերպումն առավել արդյունավետ եւ պատշաճ դարձնելու նպատակով:

Վարդենիսի մշակույթի տանը գործող երգի խմբակին տրամադրվել են անհրաժեշտ երաժշտական սարքավորումներ, որոնք կնպաստեն խմբակի ստեղծագործական գործունեության շարունակական զարգացմանն ու նոր հնարավորությունների ստեղծմանը: Համայնքի տարբեր բնակավայրերում տոնավաճառների կազմակերպման նպատակով տրամադրվել են տաղավարներ, որոնք նոր հնարավորություններ կստեղծեն բնակիչների, հատկապես կանանց, ձեռնարկատիրական նախաձեռնությունների, տեղական արտադրանքի եւ ստեղծարար գաղափարների ներկայացման համար:

Համագործակցության շարունակականությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով Վարդենիսի համայնքապետարանի եւ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի միջեւ ստորագրվել է համագործակցության հուշագիր:

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Սեւանի սանիտարական եւ բնապահպանական բարեփոխումների ծրագրի» շրջանակներում «ԲԻՄ Ինժեներինգ» ընկերության խորհրդատվական թիմն անցկացրել է հանրային լսում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, հանրային քննարկումը վարել է «Սեւանի սանիտարական եւ բնապահպանական բարեփոխումների ծրագրի» թիմի ղեկավարի տեղակալ Վահրամ Մկրտչյանը: Բանախոսի ներկայացմամբ՝ ծրագրի նպատակն է՝ բարելավել Սեւանա լճի ավազանի կեղտաջրերի հավաքման, հեռացման եւ մաքրման համակարգերը՝ նպաստելով Սեւանա լճի ջրի որակի պահպանմանը, շրջակա միջավայրի աղտոտման նվազեցմանը եւ բնակչությանը մատուցվող սանիտարական ծառայությունների բարելավմանը: Ծրագրով նախատեսվում է Գավառ, Մարտունի եւ Վարդենիս քաղաքներում կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայաններ եւ ընդլայնել գործող կոյուղու ցանցերը, արդիականացնել կեղտաջրերի մաքրման կայանները, ինչպես նաեւ կենտրոնացված կոյուղու համակարգին միացնել հարակից բնակավայրեր, այդ թվում՝ Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Վաղաշեն, Գեղհովիտ բնակավայրերը՝ ի թիվս ծրագրում ներառված այլ բնակավայրերի:

Հանդիպման ընթացքում բանախոս Վահրամ Մկրտչյանը ներկայացրեց Ծրագրի հիմնական ուղղությունները, նախատեսվող եւ ընթացիկ տեխնիկական ուսումնասիրությունները, բնապահպանական եւ սոցիալական գնահատման նպատակներն ու հիմնական մոտեցումները:

Հայկ Հովհաննիսյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՕՐԸ ԳԵՂՀՈՎԻՏՈՒՄ ՆՇՎԵԼ Է ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՋԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ

Գեղարքունիքի՝ Գեղամա աշխարհի օրը Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղի մշակույթի տանը նշվել է է գիտահանրամատչելի հանդիպմամբ, որի առանցքում մեր հայրենիքի պատմության, հնագիտական ժառանգության եւ տեղական հիշողության ուսումնասիրությունն էր:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Վազգեն Պողոսյանի «Գեղհովիտ» գրքում ներկայացված արխիվային փաստագրություններին, տոհմագրական նյութերին եւ Գեղհովիտի պատմությանը վերաբերող կարեւոր վկայություններին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կիկլոպյան ամրոցներին՝ որպես տարածաշրջանի հնագույն պատմության կարեւորագույն վկայությունների: Մասնակիցներին ներկայացվել են արխիվային եւ ժամանակակից լուսանկարներ, որոնց միջոցով փորձ է կատարվել նոր հայացքով դիտարկել մեզ շրջապատող պատմական միջավայրը եւ հասկանալ, թե ինչ պատմություններ են թաքնված մեր գյուղերի, բլուրների ու հնագույն կառույցների մեջ:

Մարտունու տարածաշրջանում ուսումնասիրված են 22 կիկլոպյան ամրոցներ, որոնցից վեցը գտնվում են Գեղհովիտի տարածքում: Գեղհովիտի վարչական տարածքում է գտնվում նաեւ Աստղային քարտեզ-ժայռապատկերը, որը կերտվել է մեզանից ավելի քան 7 հազար տարի առաջ:

-Այս փաստերը եւս մեկ անգամ վկայում են, որ Գեղհովիտի եւ ընդհանրապես Գեղարքունիքի տարածքը դարերի ընթացքում եղել է կարեւոր պատմական ու հաղորդակցական հանգույց: Երբեմն մի ամբողջ պատմություն կարող է պահպանված լինել մեկ բլրի, հին պատի կամ անգամ մի հսկա քարի մեջ: Այդ պատմությունները բացահայտելու համար անհրաժեշտ է ոչ միայն ուսումնասիրել, այլեւ հարցեր տալ, համադրել փաստերը եւ ամենակարեւորը՝ փոխանցել այդ գիտելիքը հաջորդ սերունդներին: Հանդիպման նպատակներից մեկն էլ հենց դա էր՝ սաների համար հայրենի պատմությունը դարձնել ոչ թե միայն դասագրքային գիտելիք, այլ կենդանի ու հետաքրքիր բացահայտումների աշխարհ: Փորձեցինք նրանց ցույց տալ, որ պատմությունը մեր կողքին է՝ հողի, քարի, հին ճանապարհների, ամրոցների եւ մեր նախնիների թողած հետքերի մեջ: Գեղարքունիքի օրը մեզ համար դարձավ երկխոսություն դարերի հետ՝ անցյալը ճանաչելու, ներկան արժեւորելու եւ ապագայի հանդեպ մեր պատասխանատվությունը գիտակցելու եւս մեկ հնարավորություն,- նշել է կենտրոնի աշխատակից Արմինե Հարությունյանը:

Հայկ Հովհաննիսյան

ՍԵՎԱՆ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԲԱՑՎԻ 15 ՆՈՐ ԵՐԹՈՒՂԻ

Գեղարքունիքի մարզի Սեւան եւ Ճամբարակ խոշորացված համայնքների համար կբացվի 15 նոր երթուղի:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Սեւան եւ Ճամբարակ խոշորացված համայնքների միասնական երթուղային ցանցի ձեւավորման շրջանակում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ավտոփայլ» ՍՊԸ-ն: Ներդրման արժեքը կազմում է շուրջ 453 միլիոն դրամ:

Հասարակական տրանսպորտի սպասարկման համար նախատեսվում է ներգրավել ամբողջությամբ նոր 36 միկրոավտոբուս: Տրանսպորտային միջոցների ներկրման գործընթացը գտնվում է ավարտական փուլում, եւ առաջիկա օրերին կմեկնարկի սպասարկումը:

-Միասնական երթուղային ցանցը ներառում է 15 երթուղի, ինչը շատ կարեւոր նշանակություն կունենա բնակավայրերի տրանսպորտային հասանելիության բարելավման գործում:

Նոր երթուղիները կապահովեն Սեւանի եւ Ճամբարակի բնակավայրերի միջեւ կապը, ինչպես նաեւ Սեւան եւ Ճամբարակ քաղաքներից դեպի Երեւան ուղեւորափոխադրումները,- ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Կայք էջ՝ https://geghama.am/
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 25. 09. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: